ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2015 թվականի N103-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 1-ի նիստի N 1 արձանագրության, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային մարզային հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 1-ի N 1 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2. <<Կապան-Սյունիք>> N 5 երթուղու սպասարկման ժամկետ սահմանել չորս տարի:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. օգոստոսի 6
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2015 թվականի
օգոստոսի 6-ի N 103 -Ա որոշման

Արձանագրություն N1

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 1 օգոստոսի 2015 թվականի N 1 նիստի

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2015 թվականի հուլիսի 31-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով հինգ անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Վ.Դավթյանը:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2015 թվականի հուլիսի 31-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակցի ներկայացրած նյութը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները մրցութային հանձնաժողովը **որոշում է.**

1.Հաղթող ճանաչել <<Վաչագան-Նավասարդ>>՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.

2.<<Կապան-Սյունիք>> N5 ավտոմեքենաների մակնիշը՝ «ԳԱԶ32213», պետհամարանիշը՝ 681OR61, «ԳԱԶ32213», պետհամարանիշը՝ 403OM61,

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները ՝ կողմ ՝5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահ **Վ.Դավթյան**

Անդամներ **Ռ.Ավետիսյան**

Ս. Աղաբեկյան

Ս. Արզումանյան

Ա.Ասրյան